# Քրիստոնյա Հայաստան

2016, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (472)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

### *14 հոկտեմբերի* ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին:

Շնորհավորելով Ա. Դավթյանին՝ պատասխանատու պաշտոն ստանձնելու առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց նրան արդյունավետ ծառայություն, եւ կարեւորելով գլխավոր դատախազության դերակատարությունը՝ ընդգծեց արդարադատության եւ օրենքի նկատմամբ վստահության բարձրացման անհրաժեշտությունը: Վեհափառ Հայրապետը նաեւ հույս հայտնեց, որ այս ուղղությամբ ձեռնարկվող շարունակական եւ հետեւողական քայլերն իրենց բարի պտուղները պիտի տան՝ իրականացնելով ժողովրդի սպասումները:

ՀՀ գլխավոր դատախազը, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ օրհնության եւ բարեմաղթանքերի համար, իր հերթին վստահեցրեց, որ ամեն ինչ պիտի արվի առաջադրված նպատակների իրագործման համար:

### *16 հոկտեմբերի* «IEEE EWDTS» 2016՝ Արեւելք-Արեւմուտք. նախագծում եւ թեստ» միջազգային գիտաժողովի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունեց 14-րդ «IEEE EWDTS» 2016՝ Արեւելք-Արեւմուտք. նախագծում եւ թեստ» միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ գիտաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Երվանդ Զորյանի:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էր 31 երկրից շուրջ 200 ներկայացուցիչ, ինչպես նաեւ 25 բանախոս՝ ԱՄՆ-ի, Մեքսիկայի, Գերմանիայի, Շվեդիայի, Կանադայի, Ռումինիայի, Իտալիայի, Հնդկաստանի, Չինաստանի եւ Ֆրանսիայի առաջատար ընկերություններից ու համալսարաններից:

Սկզբում տիար Ե. Զորյանը Նորին Սրբությանը ներկայացրեց գիտաժողովի մասնակիցներին եւ հայցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունը:

Գարեգին Բ Կաթողիկոսը, ողջունելով ամենքին, ի մասնավորի անդրադարձ կատարեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաեւ Եկեղեցու առջեւ ծառացած ժամանակակից մարտահրավերներին:



Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին իր հոգեւոր առաքելության հետ մեկտեղ եղել է կերտողն ու արարողը, ինչպես նաեւ հովանավորը հայ մշակույթի եւ գիտության: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ներկաների մատուցած ծառայությունները եւ կարեւոր նկատեց, որ նրանց մտքի արգասիքները նպաստեն միմիայն մարդկային կյանքի առաջընթացին ու բարօրությանը, խաղաղությանն ու արդարությանը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը բերեց գիտաժողովի նախագահ Ե. Զորյանին՝ Հայաստանում բարձր տեխնոլոգիաների զարգացման հարցում ունեցած կարեւոր ներդրման եւ ազգային կյանքում բերած օգտաշատ մասնակցության համար:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանն ու Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

### *17 հոկտեմբերի* ՀՀ մշակույթի նորանշանակ նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար տիար Արմեն Ամիրյանին:

Շնորհավորելով նախարարին՝ նշանակման կապակցությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրան մաղթեց արդյունավետ ծառայություն՝ ի նպաստ հայրենիքի եւ հայ ժողովրդի մշակութային կյանքի զարգացման:

Վեհափառ Հայրապետը, կարեւորելով մշակույթի դերակատարությունը հայոց կյանքում, մասնավորապես ընդգծեց, որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում նաեւ իր մշակույթի շնորհիվ է կարողացել ապրել ու հարատեւել:

Նորանշանակ նախարարն իր հերթին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ օրհնության ու գնահատանքի համար, եւ կարեւորեց նախարարության համագործակցությունը Մայր Աթոռի հետ:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նախարարության գործունեությանը եւ առկա մարտահրավերներին, խոսվեց նաեւ սրբավայրերի ու պատմամշակութային այլ հուշարձանների պահպանության խնդիրների մասին:



### *23 հոկտեմբերի* Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի իշխան եւ մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեստինգին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի իշխան եւ մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեստինգի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանի եւ ՀՀ-ում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան-Միշել Ուղուրլյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով պրն Ֆրա Մեթյու Ֆեստինգին եւ նրան ուղեկցող անձանց, նշեց, որ իր հայրապետության ընթացքում բազմիցս առիթներ է ունեցել տարբեր միջոցառումների եւ հոգեւոր արարողությունների ժամանակ ընդունելու Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի դեսպաններին ու ներկայացուցիչներին: Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտը պատմության ընթացքում մեծ ծառայություններ է մատուցել մարդկությանը եւ այսօր էլ շարունակում է իր օգտակարությունը բերել տարբեր ոլորտներում:

Խոսելով Ուխտի եւ Մայր Աթոռի միջեւ առկա կապերի մասին՝ Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձ կատարեց միջեկեղեցական հարաբերություններին՝ փաստելով, որ Հայ Եկեղեցին մշտապես սերտ կապեր է ունեցել քույր Եկեղեցիների հետ, որոնք ներկայումս եւս շարունակում են զորանալ ու զարգանալ:

Անդրադառնալով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատմությանն ու դերակատարությանը՝ Նորին Սրբությունը մասնավորապես ընդգծեց քրիստոնեության վրա խարսխված այն զորեղ հավատքն ու անկոտրում ոգին, որով հայ ժողովուրդը դիմագրավել է պատմության ընթացքում իր առջեւ ծառացած մարտահրավերներն ու փորձությունները եւ կերտել իր հաղթանակները:

*Շարունակությունը՝ էջ 2*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Սկիզբը՝ էջ 1*

Նորին Վսեմություն իշխան եւ մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեստինգն իր հերթին ուրախություն հայտնեց Մայր Աթոռ այցի առիթով, Հայոց Հովվապետին ներկայացրեց Ուխտի կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերը: Պրն Ֆեստինգը նաեւ պատրաստակամություն հայտնեց շարունակելու համագործակցությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի մեծ վարպետը կարեւորեցին սոցիալական ոլորտում իրականացվող մարդասիրական ծրագրերը: Մասնավորապես խոսվեց Հայաստանում ապաստան գտած սիրիահայ ընտանիքների համար կեցության համապատասխան պայմաններ ստեղծելու, ինչպես նաեւ ղարաբաղյան հակամարտության պատճառով վիրավորվածներին եւ տուժածներին հոգատարություն ու խնամք ցուցաբերելու անհրաժեշտության մասին:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտը շարունակի նույն նախանձախնդրությամբ եւ ավյունով ամենուրեք օգտաշատ ծառայություններ մատուցել տառապանքի, կարիքի եւ ցավի մեջ գտնվող անձանց:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:



# Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հետ

Հոկտեմբերի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, «Դեսպաններ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության դեսպանի կեցավայրում հանդիպում ունեցավ ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների եւ դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հետ:

Հանդիպման սկզբում ներկաներին ողջունեց ծրագրի նախաձեռնող, ՀՀ-ում Լիբանանի դեսպան տիար Ժան Մակարոնը: Վերջինս շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր հրավերին ընդառաջ ծրագրին մասնակցելու եւ դեսպաններին «Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու առաքելությունը անցյալում եւ ներկայում» խորագրով բանախոսություն ներկայացնելու պատրաստակամության համար:

Այնուհետեւ դեսպաններին եւ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գեղեցիկ հավաքույթի կազմակերպման առիթով իր գնահատանքը հայտնելով ՀՀ-ում Լիբանանի դեսպանին:

Բանախոսության մեջ Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հիմնադրմանն ու բազմադարյա սպասավորությանը՝ խոսելով նաեւ ազգային ինքնության պահպանության գործում ունեցած նրա կարեւոր դերակատարության մասին:

*«Հայոց Եկեղեցու առաքելությունը տարածվում է հայ ժողովրդի բազմադարյա պատմության եւ Հիսուս Քրիստոսի հարությամբ բացված ճանապարհի երկու սահմանագծերում: Նա չարչարակից է եղել իր ժողովրդին, մարտիրոսվել իր զավակների հետ՝ միշտ վառ պահելով, սակայն, իր Հիմնադրի՝ Հիսուս Քրիստոսի հարության կենսապարգեւ հույսը: Ահա այսպիսին է պատմության ու Հարության խորհուրդների միջեւ ծագած ու մինչ օրս շարունակվող Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու առաքելության սահմանումը: Գողգոթայի խաչից, մեր Տեր Հիսուս Քրիստոսի գծած արյան հետքերով, այն հասնում է մինչեւ Տիրոջ գերեզման՝ հարություն առնելով ու վերանորոգվելով կրկին իր Տիրոջ հաղթական օրինակով:*

*Ժողովրդի ու ազգի հետ քրիստոսանման այս նույնացման պատճառով է, որ դեռեւս Ե դարից այն որակվել է Ազգային Եկեղեցի՝ ոչ թե այլ ազգերի բացառման հաշվին, այլ Քրիստոսի կողմից իրեն վստահված ազգի հանդեպ բոլորանվեր, անմնացորդ ծառայության օրինակով: Այս գաղափարն է մղել նրան պատմության ընթացքում, իբրեւ «ուխտ միաբանութեան» (Եղիշե, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»), կերտելու ազգային ու հոգեւոր ինքնություն: Անցյալի առաքելության մի կարեւորագույն գործոնն է սա, երբ Եկեղեցին ազգի համար կերտում է ինքնություն՝ հիմնված քրիստոնեական համամարդկային արժեքների, հոգեւոր ու մշակութային նշանակալի ձեռքբերումների վրա: Ինքնություն, որի մասին դիպուկ արտահայտվել է Ե դարի մեր պատմիչ Եղիշեն՝ բնորոշելով այն իբրեւ «մաշկի գույն»:*

*Ազգային-քրիստոնեական այս ինքնությունը հայ ժողովրդի կյանքում Հայոց Եկեղեցու առաքելության առանցքն է: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի իրավիճակներում ու հանգամանքներում կզարգանար հայ ժողովրդի կյանքը, եթե իր ինքնության գիտակցումով նա ինքն իրեն չնույնացներ Հիսուս Քրիստոսի վկայության հետ: Ինչպե՞ս պիտի հաղթահարեր պատմության ու ժամանակի աղետները, մարդկության ամենամեծ ողբերգություններից մեկը՝ ցեղասպանությունը եւ խորհրդային ամբողջատիրական բռնապետության 70 երկար տարիների հալածանքը:*

*Գոհունակությամբ եւ առ Աստված աղոթքով ենք այսօր անդրադառնում, որ քրիստոնեական հավատի ու վարդապետության վրա հիմնված այդ ինքնության շնորհիվ այսօր էլ հայ ժողովուրդը ապրում է՝ իբրեւ գերազանցապես քրիստոնյա հավատավոր ազգ: 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո թեեւ հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքից ու 1.5 միլիոն իր զավակներից, դարձավ աստանդական աշխարհի ամենատարբեր վայրերում ու անկյուններում, սակայն հավատարիմ Հիսուս Քրիստոսին հետեւելու իր անմնացորդ նվիրումին՝ նույնիսկ այդ վիճակում ստեղծեց*



*հոգեւոր-ազգային, քրիստոնեական մի կուռ միավոր, որն այսօր անվանում ենք Սփյուռք: Հոգեւոր հայրենիք, որն անտեսանելի ու անխզելի, անթիվ ու անհամար թելերով կապված է իր այսօրվա հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության հետ: Այլաբանորեն ասած՝ այսօր Հայաստանն ու Սփյուռքը Հայոց Եկեղեցու երկու վճիտ աչքերն են, որոնցով նա կարողանում է տեսնել, հստակեցնել ազգային-հասարակական խնդիրներն ու դրանց լուծումները՝ միաժամանակ մտահայումով ու աղոթքի զգացումով դրանց հաղթահարումը խարսխելով Աստծու պատվիրանների կենսագործման վրա»*,- նշեց Նորին Սրբությունը:

Խոսելով մերօրյա ծառայության մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ Հայոց Եկեղեցին այսօր նոր ներշնչումով ու եռանդով է լծված հասարակության կյանքի բարելավմանը:

*«Ձեզ քաջ հայտնի է, որ ավերիչ երկրաշարժը, ղարաբաղյան հակամարտությունը, երկրի շրջափակումն իրենց բացասական ազդեցությունն ունեցան երկրի սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Անկախության առաջին իսկ օրերից Հայոց Եկեղեցին իր ակտիվ մասնակցությամբ ձեռնամուխ եղավ վերոհիշյալ երեւույթների արդյունքում առաջացած հիմնախնդիրների լուծմանը: Հայոց Եկեղեցին այսօր արդեն ակտիվ ներկայություն ունի հայ հասարակության ամենատարբեր շերտերում՝ զինված ուժեր, առողջապահություն, կրթություն եւ գիտություն, մշակույթ եւ հայապահպանություն: Այս իմաստով Եկեղեցին առավել ջանքեր է ներդնում՝ հասարակության մեջ ամրագրելու եւ պահպանելու հոգեւոր-բարոյական արժեքները՝ բացառելու համար արատավոր եւ մերժելի այն երեւույթներն ու դրսեւորումները, որոնք խաթարում են մեր ժողովրդի ներկա կյանքը: Կարեւոր ենք համարում նաեւ արձանագրել Հայոց Եկեղեցու իրականացրած առաքելությունը հոգեւոր կրթության ու դաստիարակության ոլորտում՝ նորահաս սերնդին տալով հայ քրիստոնեական ինքնության եւ Հայոց Եկեղեցու մասին անհրաժեշտ ճանաչողական գիտելիքը: Մայր Աթոռն ունի Սոցիալական ծառայությունների գրասենյակ, որն օգնություն եւ աջակցություն է ցույց տալիս շուրջ 20.000 անձի»*,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Եկեղեցու գործունեության կարեւոր մեկ ոլորտի եւս՝ միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին՝ ուղղված ժողովուրդների միջեւ սիրո, համագործակցության եւ խաղաղ համակեցության ոգու զորացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հաստատեց, որ այդ հարաբերությունների ու փոխադարձ կապերի առավել զորացմանը նպաստում են նաեւ ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական կառույցները եւ անձնապես դեսպանները՝ շնորհակալություն հայտնելով նրանց Մայր Աթոռի եւ եկեղեցական կառույցների հետ նրանց արդյունավետ համագործակցության համար:

Վերջում Հայոց Հայրապետը դեսպաններին մաղթեց հաջողություններ ու նոր ձեռքբերումներ դիվանագիտական պատասխանատու առաքելության մեջ՝ ի խնդիր երկրների եւ ժողովուրդների միջեւ եղբայրական կապերի զորացման եւ համագործակցության արդյունավորման:

Նորին Սրբությունը նաեւ պատասխանեց դեսպանների հարցերին, որոնք վերաբերում էին աղքատության վերացմանն ուղղված՝ Եկեղեցու ծրագրերին, ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծման ուղիներին, Հայոց Եկեղեցու խաղաղարարական ջանքերին, միջեկեղեցական հարաբերություններին եւ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակին:

Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը, Աղան աբեղա Երնջակյանը եւ Մայր Աթոռի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրեն պրոֆ. Արմեն Չարչյանը:

# Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովը Մայր Աթոռում

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովի հանդիսավոր բացումը: Այս տարվա գիտաժողովը նվիրված էր հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրության 350-ամյակին:

Համաժողովի կազմակերպիչներն էին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Հայաստանի ազգային գրադարանը:

Բացման արարողությանը ներկա էին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը:

Համաժողովը բացվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Արարատ քհն. Պողոսյանի խոսքով:

Տեր հայրը մասնավոր անդրադարձ կատարեց համաժողովի նախորդ գումարումների արդյունքում արձանագրված ձեռքբերումներին, համաժողովի աշխատանքների համակարգմանը եւ առաջիկա ծրագրերին: Խոսելով համաժողովին ցուցաբերվող զորակցության մասին՝ Արարատ քահանան հավելեց. *«Հայ Առաքելական Ս. Եկեղեցին՝ ի դեմս Ս. Էջմիածնի մատենադարանի, եւ ՀՀ մշակույթի նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի ազգային գրադարանի, եղել եւ մնում են որպես հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային գանձարանը հարստացնող համազգային եւ ազգային կառույցների տպագիր գրականության պահապաններ»*:

Այնուհետեւ համաժողովի մասնակիցներին ողջունեց եւ իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*«Ուրախ ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված տեսնել հայկական գրադարանների եւ մշակույթի պատասխանատուներիդ ու պաշտոնյաներիդ:*

*Մեր օրհնությունն ենք բերում ձեզ եւ Մեր գնահատանքը՝ ձեր նախանձախնդիր մասնակցության համար Մայր Աթոռի մատենադարանի, ՀՀ մշակույթի նախարարության եւ Ազգային գրադարանի կողմից հրավիրված համաժողովին, որ նվիրվում է Աստվածաշունչ մատյանի տպագրության 350-ամյակին:*

*Սուրբ Գրքի տպագրության հոբելյանը մեր ժողովրդի համար նշանակալի առիթ է մեկ անգամ եւս արժեւորելու մեր գրավոր ժառանգությունը եւ այն անխոնջ ջանքերն ու նվիրումը, որ մեր երախտավորների կողմից գործադրվել են հարուստ այդ ժառանգությունն ստեղծելու համար:*

*Տպագրությունը մարդկության մեծ ձեռքբերումներից մեկն է: Այն հնարավորություն տվեց, որ գիտելիքը, մարդկային մտքի նվաճումները արագորեն տարածվեն, լուսավորությունը հասնի հասարակության բոլոր շերտերին: Նույնիսկ կարելի է ասել, որ տպագրությունը արդի քաղաքակրթությունը ձեւավորող նպաստավոր պայմաններից մեկն է: Այս ընթացքի մեջ բոլորովին պատահական չէ, որ մեր ժողովուրդն աշխարհում առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ տպագրության գործին: Բնական ուղին էր դա մի ժողովրդի, որ մինչ տպագրության դարը մեկ հազարամյակ մայրենի լեզվով ձեռագիր մատյաններ էր ստեղծում՝ շատ հաճախ չունենալով խաղաղություն ու ապահովություն եւ ապրելով զրկանքների մեջ: Հոգեւոր կերակուրից, սակայն, ոչ ոք չկարողացավ զրկել մեր ժողովրդին, որ հավատարիմ քրիստոնեական իր ոգուն՝ հավատաց հոգեւոր զորության բարեփոխող ուժին եւ ապրեց ու ստեղծեց ի սեր խաղաղ ու արդար աշխարհի:*

*Դուք, սիրելինե՛ր, պահպանում, վերականգնում, ուսումնասիրում եւ ներկայացնում եք գրավոր ժառանգությունը, որին մեր ժողովուրդը պահ է տվել իր հոգին ու միտքը, իր պատմությունը, իր աշխարհաճանաչողությունը, գիտելիքն ու հույզերը, իր բնաշխարհի բույրն ու գույները, որոնք պիտի փոխանցենք սերունդներին: Այսօր մենք ապրում ենք էլեկտրոնային գրքի դարում, որը նոր հնարավորություններ է ստեղծում, որպեսզի գրապահոցներում եղած ժառանգությունը հասու լինի հասարակությանը: Այս ուղղությամբ մեծապես գնահատում ենք վերջին տարիների ձեր ջանքերը, էլեկտրոնային գրադարանների ստեղծման ուղղությամբ իրականացված ծրագրերը: Ինչպիսի ձեւի մեջ էլ ներկայացվի՝ գիրքը պիտի շարունակի հոգեւոր սնունդ մատուցել մեր ժողովրդին, հաստատուն պահել մեզ աստվածօրհնյալ ճանապարհներին եւ առաջնորդել բարօր ու լուսավոր կյանքի կերտմանը:*

*Շարունակությունը՝ էջ 3*

# Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովը Մայր Աթոռում

Սկիզբը՝ էջ 2

*Հայրապետական Մեր օրհնությունն ենք վերստին բերում ձեզ, սիրելինե՛ր, եւ մեր բարձր գնահատանքը՝ ձեր նվիրումի ու ծառայության համար, մեր մշակույթին, ազգային կյանքին բերած ձեր ավանդի համար: Ողջունում ենք այստեղ ներկայությունը ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար մեծարգո տիար Արմեն Ամիրյանի, բերում Մեր շնորհավորանքները եւ մաղթում արդյունավետ գործունեություն: Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր աջակիցներին:*

*Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղ պահի մեր հայրենիքը, պահպանի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի մեր ջանքերը՝ հանուն հոգեւոր եւ ազգային մեր կյանքի պայծառության եւ մեր ժողովրդի արդար իղձերի իրագործման:*





*Բարի ընթացք եւ հաջողություն ենք մաղթում համագումարի աշխատանքներին»*,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Ապա համաժողովի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց նաեւ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը:

Պարոն նախարարը հատկանշական համարեց, որ համաժողովները կրում են «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագիրը: *«Թեմատիկ ուղղությունները համահունչ են Մշակույթի նախարարության կողմից գրադարանային ոլորտում իրականացվող աշխատանքներին: Գրքափոխանակության կազմակերպումը հայագիտական հաստատությունների միջեւ կշարունակվի մնալ նախարարության առաջնային խնդիրների ցուցակում, եւ վստահ եմ, որ համաժողովի մասնակիցները կշարունակեն արդյունավետ համագործակցություն այս ուղղությամբ»*,- նշեց պարոն Ամիրյանը: Նախարարն անդրադարձավ Սփյուռքի հայկական խոշոր հավաքածուներ ունեցող կառույցներին թվայնացնող սարքերով, ծրագրատեխնիկական եւ մեթոդական լուծումներով աջակցելու անհրաժեշտությանը եւ այս ուղղությամբ նախարարության կողմից իրականացվող աշխատանքներին:

*«Հուսով եմ, որ համաժողովի առջեւ դրված առաքելությունը, այն է՝ աջակցել հայագիտական կենտրոններին, գրադարաններին հայ տպագիր ժառանգության հաշվառման խնդրում, եւ շարունակաբար հոգ տանել հայ ժառանգության հանրայնացման երկարաժամկետ պահպանության հարցում, ամբողջովին կիրականանա, եւ քննարկումների արդյունքում կգտնվեն համագործակցության նոր ուղիներ, կառաջարկվեն նոր մոդելներ, գրադրանային հավաքածուների էլեկտրոնային քարտագրման, թվայնացման եւ պահպանման հայաստանյան գրադարանների ներկա վիճակի, ապագայի մտորումներով, հայագիտական գրադարանների միջեւ համագործակցության վերաբերյալ»*,- եզրափակեց նախարար Արմեն Ամիրյանը:



Համաժողովի բացմանը խոսք ասաց նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան, մատենադարանապետ Տիրայր արք. Փանոսյանը:

# Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Հոկտեմբերի 23-ին՝ Ս. Խաչի գյուտի տոնին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ, որի ընթացքում կատարվեց նաեւ քահանայական ձեռնադրություն: Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի ձեռամբ քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ինը սարկավագ:

Նախորդ օրը՝ Երեկոյան ժամերգությունից առաջ, կատարվել էր ընծայման կարգը: Ս. Պատարագի ընթացքում՝ աղոթքներից հետո, «Աստվածային եւ երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո նորընծաները, դառնալով դեպի ժողովուրդը եւ ծնկի գալով, ձեռքերը վեր բարձրացրած հրաժարվեցին աշխարհից եւ կոչվեցին քահանայության:

Այնուհետեւ, սրբալույս Մյուռոնով օծելով նրանց ճակատներն ու ձեռքերը, Հովնան սրբազանը նորաօծ եկեղեցականներին շնորհեց հոգեւոր նոր անուններ: Գարիկ սարկավագ Ասրյանը վերակոչվեց Ներսես քահանա, Արսեն սարկավագ Հմայակյանը՝ Մաշտոց քահանա, Ժորա սարկավագ Սարգսյանը՝ Հովսեփ քահանա, Բենիամին սարկավագ Ոսկանյանը՝ Մամբրե քահանա, Նարեկ սարկավագ Մարդիրյանը՝ Եզնիկ քահանա, Լեւոն սարկավագ Սահակյանը՝ Սահակ քահանա, Արմեն սարկավագ Մարգարյանը՝ Դավիթ քահանա, Գեղամ սարկավագ Նուրիջանյանը՝ Եղիշե քահանա, իսկ Արթուր սարկավագ Անտոնյանը՝ Նարեկ քահանա:

Հավարտ ձեռնադրության արարողության՝ նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Այնուհետեւ ձեռնադրող սրբազանը քարոզեց ձեռնադրության խորհրդի մասին՝ նշելով. *«Մեր Տեր Հիսուս Քրիստոսը, գալով աշխարհ, ընտրեց տասներկու աշակերտների, նրանց տվեց իշխանություն՝ քարոզելու եւ բժշկելու, եւ ուղարկեց աշխարհ: Վերջիններս էլ ընտրեցին իրենց իրավահաջորդներին՝ ձեռքերը դնելով նրանց գլխին՝ իշխանություն տալով բժշկելու ու դեւեր հանելու համար, եւ իրենց հերթին ուղարկեցին աշխարհի չորս կողմերը: Եվ այսօր, սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, մենք էլ կատարեցինք ձեռնադրություն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ինը նվիրյալ միաբանների կոչելով քահանայության, որպեսզի իրենք նույնպես գնան ու կատարեն մեր Տեր Հիսուս Քրիստոսի սիրո կտակը՝ քարոզել աշխարհում եւ աշխարհի համար հանդիսանալ աղ եւ լույս»*:

Հովնան սրբազանը նաեւ իր պատգամը փոխանցեց նորաօծներին: *«Շատ մեծ անելիք ունեք: ...Պետք է գնաք դեպի աշխարհ, դեպի ժողովուրդ, պիտի այցելեք նրանց տներ, պիտի հիշեցնեք, որ հավիտենական հոգիներ ունեն, պիտի հիշեցնեք, որ մահկանացու են եւ պետք է սովորեցնեք Եկեղեցի տանող ճամփան: ...Դուք պետք է լինեք նրանց հոգեւոր հայրը, պիտի սրբեք նրանց արտասուքները, մուտք գործելով տներ՝ պիտի խաղաղություն բերեք, աղքատների համար հույս պիտի լինեք, կարոտյալների համար՝ մխիթարություն:*

*Սիրելի՛ նորաօծ քահանա եղբայրներ, մեծ գործ ունեք իրականացնելու, սակայն այդ գործը կատարելու համար դուք միայնակ չեք, ինչպես Հիսուս Քրիստոսն ասաց՝ առեք Ս. Հոգին: Եվ այսօր քահանայական ձեռնադրությամբ դուք այդ շնորհն ստացաք:*

*...Շատ հաճախ Աստծուց պիտի առնեք Իր առատ շնորհները եւ բաշխեք մեր հավատավոր ժողովրդին, եւ, ընդհակառակը, մեր ժողովրդից պետք է վերցնեք իրենց դարդերը, մտածումները, իրենց մեղքերը եւ մատուցեք Աստծուն: Շատ ծանր, բայց փառավորյալ է ձեր գործը, որովհետեւ զբաղվելու եք հոգիների փրկությամբ, մարդկանց դեպի հավիտենականություն առաջնորդելու եւ վերջապես՝ մեր Տիրոջը՝ Աստծու Որդուն ներկայացնելու այս աշխարհում»*,- ասաց ձեռնադրող սրբազանը՝ հորդորելով ստացված կոչումը կյանքով եւ գործով արժեւորել եւ աշխարհի համար իրապես հույս եւ լույս դառնալ:





Մայր Աթոռի տարեգրության մեջ հիշարժան այս օրվա առիթով Հովնան եպիսկոպոսը շնորհավորեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին եւ հոգեւոր դասին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությանը եւ դասախոսներին, ինչպես նաեւ՝ նորաօծների ծնողներին, երեցկանանց ու հարազատներին:

Քարոզից հետո ներկա հոգեւոր դասը՝ առաջնորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բարձրացավ խորան՝ շնորհավորելու երիտասարդ քահանաներին եւ համբուրելով նրանց մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալու խաղաղության առաջին «Ողջույնը»:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում քառասնօրյա պատրաստության շրջանից հետո նորընծաներն Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:

# Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ....

Քաղաքի՝ պատմության շերեփով քերված ճանապարհներն ու նեղլիկ փողոցները հիշեցնում են այն հակասական, բայց երկար ու հարուստ ուղին, որ անցել է Հռոմեակաթոլիկ Եկեղեցին: Դրանք հաճախ լայն են, մեծղի, վախ ու պատկառանք ներշնչող, հաճախ էլ՝ նեղ, ոլոր-մոլոր, դիվանագետի երկար, անընդհատ կրկնվող ու ենթատեքստ փնտրող նախադասությունների նման...

Հռոմում խառնվել ու շարունակում են խառնվել մշակույթները: Արեւմայից դեպի հյուսիս ձգվող նեղլիկ փողոցներում խանութների վրա անգլերեն գրված է «Italian food and drinks» (իտալական կերակուրներ եւ ըմպելիքներ), եւ կարող եք երեւակայել՝ վաճառողն էլ մի հնդիկ կամ մի սեւամորթ է, որն իր կոտրտված իտալերենով կամ անգլերենով ձեզ բացատրում է իտալական նշանավոր խոհանոցի եւ սննդի նրբությունները:



Քիչ անդին խումբ-խումբ շտապող զբոսաշրջիկներն են, որոնք ամեն քայլափոխի սնկերի պես աճող եկեղեցիների կլանող ստվերների առաջ կանգնում են՝ զարմանքից քարացած աչքերով ասես լիզելով պատմության մաշող աղերից ծակոտկեն դարձած պատերը:

Այո՛, Հռոմում կարելի է գտնել հավերժության ձգտող պոռթկումը. թերեւս այս պատճառով է, որ այն հավերժական են անվանում՝ Roma eterna, ինչպես գրում է ժամանակակից վիպագիրներից մեկը: Կրոնականի, երկնայինի ինչպիսի՜ գործնական, դասակարգված մարմնավորում: Եկեղեցիների հնաբույր պատերին ամրացված մեծ ու լայն նշանակները՝ իրենց գույների ու ժամանակակից ոճի համադրությամբ, նմանվում են տարիքն առած օրիորդի հագին ճաշակով կարված զգեստների: Այստեղ ամեն բան արված է պատմության խորքերից եկած քարեղեն ու նյութական արժեքները հավերժացնելու համար: Վերցրե՛ք, օրինակ, Տիբերիոսի նշանավոր սյուն-խոյակը: Ամենուրեք նոր, արդի ոճով շենքեր, խանութներ... բայց մտովի մի պահ հանեք դրանք ձեր մտապատկերից, եւ Տիբերիոսի հաղթական արձանով խոյացող սյունն իր ողջ հայացքով կիշխի թաղամասի վրա՝ իբրեւ երբեմնի հզորության խորհրդանիշ: Կամ էլ վերցրե՛ք Վատիկանը՝ Ս. Պետրոսի մեծաշուք տաճարով ու հրապարակով, աղոթքի շտապող վանականների պես թափոր բռնած սյունաշարերով եւ երկինք հառնող սրբերի արձաններով: Դրանք, կարծես, երեկ եւ այսօր նույնն են եւ հավիտյան:



Քայլում ենք դեպի Fontana di trevi (Վազող շատրվանները). հավերժականի ու ժամանակի անընդմեջ պայքարով նշանավորված շատրվանի ջրերը դեպի իրենց են քաշում հազարավոր զբոսաշրջիկների: Նրանք, իրենց երազանքի մանկական միամտությամբ, հատուկ ու լուրջ մի ծեսով, մեջքով շրջվում են դեպի շատրվանը եւ հանդիսավորությամբ մետաղադրամը նետում շատրվանի մեջ. առաջին անգամ՝ կրկին Հռոմ գալու համար, երկրորդ անգամ՝ երկու մետաղադրամ նետելով՝ սիրահարվելու, երրորդ անգամ՝ երեք մետաղադրամ նետելով՝ մեծ հարսանիքի բերկրանքով, չորրորդ անգամ՝ չորս մետաղադրամով՝ հարստանալու բաղձանքով, իսկ հինգերորդ անգամ... մեծ բաժանման կսկիծը ճաշակելու համար: Ասում են, որ հինգերորդ անգամ հինգ մետաղադրամ նետող գրեթե չկա, բացի թերեւս... առաջին նետողից.... Լուռ ընկաց մետաղադրամը, եւ ձեր երազանքն արդեն ճամփա է ընկած: Ակամայից միտքս է գալիս Ռեֆորմացիայի կամ Բարեկարգության շրջանի նախօրյակին Կաթոլիկ Եկեղեցում տարածված ինդուլգենցիաների նշանավոր արտահայտությունը. «Հենց բաժակի հատակին զնգաց մետաղադրամը, ձեր հարազատի հոգին ճամփա կընկնի դեպի քավարան»:

Իհարկե, այսօրվա Հռոմը ժամանակակից է. չնայած պատմական իր ժառանգության ողջ ծանրությանն ու պատասխանատվությանը՝ այն արդիական է: Նույնիսկ Վատիկանի՝ պահպանողական ու բարձունքից հսկող աչքերն են այսօր հանդուրժողականությամբ լցվում արդիականացման այս նոր երեւույթի նկատմամբ: Վատիկանի Բ՝ նշանավոր ու պատմական ժողովը կարծես նոր շունչ բերեց հավերժական քաղաքին: Եթե նախկինում Վատիկանն ու Հռոմը լցվում էին հիմնականում աշխարհի տարբեր կողմերից ժամանած կաթոլիկ հոգեւոր սպասավորներով, ապա այսօր Վատիկանն ու Հռոմը պատրաստակամ եւ բաց ձեռքերով ընդունում են նաեւ քրիստոնեական այլ հարանվանություններից ժամանած հոգեւորականների...

Բայց Հռոմը նաեւ համաեվրոպական է. այն կարծես նյութականացած հերքումն է շպենգլերյան հայտնի տեսության, թե Արեւմուտքի մայրամուտը մոտ է: Հավերժական քաղաքն իր մարտն է մղում հանուն համաեվրոպական քրիստոնեական արժեքների: Ասես մեծ ու նահապետական մի ընտանիքի հայր՝ նա դեռ իր ոսկրոտ ու ծերությունից դողդոջող ձեռքերով փորձում է սահմանագծել Հռոմեական կայսրությունից ժառանգած ու քրիստոնեականացված Հին աշխարհը: Նա փորձում է երեւալ ավելի անմիջական՝ մի կողմ թողնելով նախկինի կայսերականպապական նկրտումները, խիստ ու պատժող նահապետի հայացքը փոխարինվում է խնամող հոր գթառատ նայվածքով, սեւ ու սպիտակը տարբերակող սուբյեկտիվ բարոյականությանը փոխարինելու է գալիս հանդուրժող, լսող ուսուցիչը...

Բայց օրեցօր փոքրացող այս աշխարհում, խճճվող ճանապարհների առատության պատճառով բոլոր ճանապարհները չէ, որ տանում են Հռոմ: Homo europaeus-ը (եվրոպացին) նոր, ավելի կատարելագործված ճանապարհներ է կերտում դեպի մարդու հավերժության իր տեսլականը: Իսկ ծերացած, դողդոջուն ձեռքերով հավերժական հայրը դեռ սպասում է որդու վերադարձին:

***Շահե ծ. վրդ. ԱՆԱՆՅԱՆ***

# ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ՝ ԲԱՐՔԵՐԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ



*Սկիզբը՝ թիվ19*

Օշականը, մասնակիցը լինելով իր գյուղի հարսանիքներին եւ տոնախմբություններին, ընթերցողներին եւս դարձնում է դրանց ականատեսն ու ունկնդիրը («Հորքուր Վարդան»):

Գյուղի ահելներն ու ջահելները տարբերվում էին որոշակի հագուստով (չուխա, ֆես, չեմպեր եւ այլն): Հագուստը կարող էր նաեւ ընտրած կամ սիրած զբաղմունքի վկայություն լինել: Այն նաեւ որոշակի կարգավիճակի նշան էր: Ընդունված կարգի համաձայն՝ երբ տղան դառնում էր տասնհինգ տարեկան, նա արդեն փեսացու էր համարվում. ուներ իր նշանածը, ուստի պարտադիր պետք է կարմիր գոտի ունենար, գլխին՝ սրածայր գլխարկ, ոտքերին՝ գուլպա՝ կապիչներով: Նշանված տղաներն էլ յուրահատուկ խանդավառությամբ էին հագնում կարմիր գոտի, անութի տակ սեղմած պահում «ճերմակ, նրբամարմին ճիպոտ մը» եւ հպարտ քայլերով անցնում աղջիկների հիմնական հավաքատեղի համարվող աղբյուրի մոտով («Սիրածներէս»):

Մինչեւ նշանվելը՝ աղջնակները վազվզում էին ոտաբոբիկ, սակայն նշանվելուց հետո տնից մի քիչ հեռանալու կամ գյուղից դուրս գալու դեպքում նրանց պարտադրում էին հագնել փայլփլուն կոշիկ ու նռան գույնի գուլպա: Սրան ավելանում էին այլ արգելքներ ու պահանջներ, որոնք, փաստորեն, մանկամարդ աղջիկներին զրկում էին իրենց այնքան քաղցր ոսկեծամ մանկությունից:

Եթե մեր օրերում աղջկա նշանված լինելը պարզվում է մատնեմատին անցկացված մատանուց, ապա այդ ժամանակ աղջկա «ձեռքերուն անցկացված հիլալ»-ը եւ պարանոցի ոսկին նշան էին «մասնավոր տղու մը սեփականության»: Նշանը սովորաբար երջանկության խորհուրդ ուներ իր մեջ: Իսկ երբեմն, եթե աղջկան ինչ-ինչ պատճառներով սահմանված չէր ամուսնանալ, մահվան նման չարագուշակ էր («Խենթ-Սողմեն»):

Գյուղի տղաներն ու աղջիկները վախենում էին միմյանց սիրել, որովհետեւ ծնողների միջեւ վաղուց կնքված համաձայնությունը շատ հաճախ ի դերեւ էր հանում նրանց սերն ու հույսերը: Շատ անգամ երիտասարդներն ամուսնական առագաստ էին մտնում՝ առանց կողակցին ճանաչելու: Պատահում էր, որ ծնողների նախաձեռնությամբ իրար միացող սրտերն այդպես էլ չէին կապվում միմյանց եւ ամբողջ կյանքում տանջվում էին իրենց սրտում բույն դրած զգացմունքի պատճառով: Բայց կային աղջիկներ, որոնք գերադասում էին՝ «Հատցնել սիրտն ու սերը: Մեղքին հետ իջնալ վար ու չըլլալ, չըլլալ...» *(Յակոբ Օշական, Երկեր, Անթիլիաս, 1998, էջ 57-41)*, քան ապրել՝ առանց ճաշակելու սիրո բերկրանքը: Հավերժական մուր էր քսվում այդ տան ճակատին, ծայր էր առնում հարալեզու ծեր բամբասանքը»: Իսկ եթե հարս գնացած աղջիկն անարատ էր, դարձ գնալիս մայրը նրան դիմավորում էր մեծ հպարտությամբ՝ մեջքին ոսկեճամուկ գոտի կապած («Դարձը», «Շահպազ», «Խենթ-Սողմեն», «Աղցանը»):

Գյուղն ապրում էր՝ սերն ու մեղքը, գաղտնիքն ու ավանդությունը գրկած: Բարքերն ու սովորույթները ձեւավորում էին մարդկանց վարքագիծը, ստեղծում հասարակության կողմից ընդունելի արժեհամակարգ, որը աղճատողները վճարում էին իրենց կյանքով: «Գեղին պատմությունը ատանկ զարտուղություններ ունի», որոնք հիմնականում ավարտվում էին մեղապարտ աղջիկների ինքնասպանությամբ: Իսկ դժբախտ պատահարներն ու բեկված ճակատագրերով հարսները գյուղում շատ էին: Նրանց կյանքն ավարտվում էր ծովի ջրերում կամ «չուանի ծայրին, տանը մեծ գերանն ի վար» *(Յակոբ Օշական, Կայսերական յաղթերգութիւն, Պէյրութ, 1983, էջ 64)*: Հայ Առաքելական Եկեղեցու օրենքների համաձայն՝ ինքնասպանների հոգին հանգիստ չուներ: Գյուղում նույնիսկ արգելում էին ինքնասպանների «մեղքին յայտարար նշան, իրենց մարմինը» ամփոփելու ընդհանուր գերեզմատանը: Նրանք վռնդված էին «մայր գերեզմանին խաղաղ փառքէն»: Գյուղը կարծում էր, որ բոլոր այդ լույս աղջիկները խաբվել էին սատանայի կամ չար ոգիների կողմից: Սա էր գուցե պատճառը, որ գյուղացին հարգանքով էր վերաբերվում իր խենթերին, որովհետեւ նրանց մեջ տեսնում էր վերին ուժերի կամքն ու ազդեցությունը («Խենթ-Սողմեն», «Չուանները», «Հին պատմութիւն»):

Ծերերի հիմնական հավաքատեղին որեւէ աղբյուրի կամ եկեղեցու բակն էր, որը ձմռանը զիջում էին որսորդներին: Այլեւս անկարող աշխատելու՝ նրանք հիմնականում զբաղվում էին տուզ ու ճատրակ խաղալով:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՇԻՐԱԶՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

*Սկիզբը՝ թիվ 14-19*

**4.**

Ավելորդ է ասել, որ Հովհ. Շիրազը քառյակներով ստեղծել է բանաստեղծական հետաքրքիր միկրոաշխարհ, որն առանց մյուս գործերի էլ նրան նորագույն ժամանակների մեր մեծ բանաստեղծներից մեկը հռչակելու բոլոր հիմքերը տալիս է: Սակայն թեմատիկ բազմազանությամբ հատկանշվող քառյակների այդ աշխարհում բոլորը հավասարարժեք բանաստեղծական գոհարներ չեն. նրանց մեջ կան թե՛ ժամանակն արտացոլող ու նրա պատնեշները ճեղքող հզոր ու անթերի, թումանյանական խորության հասնող կատարելություններ, որոնք խտացնում են խոհի, հույզի ու զգացմունքի, գաղափարի ու բանաստեղծական ձեւի ճաշակավոր, ներդաշնակ միասնություն, ինչպես այս մեկը՝

*Գարո՛ւն, գեթ դո՛ւ ինձ ծաղկունք*
*բեր՝ ծաղիկ հասակս է անցնում,*
*Գեթ մի վերջին գգվանք ու սեր,*
*ոսկեգիսակս է անցնում,-*
*Մի՞թե պիտի մեռնող աչքերս էլ*
*չտեսնեն մայրիկիս.*
*Ամեն թաղման թափորի հետ*
*մահապակս է անցնում:* (290),-

եւ թե՛ քառյակներ, որոնք գեղարվեստական ուժով ու կատարելությամբ զիջում են մյուսներին:

Բնական երեւույթ է. անգամ Թումանյանի քառյակներում կան լավերը եւ լավագույնները, այլապես չէր լինի ուժեղի եւ թույլի հասկացություն, կամ՝ հատընտիրի գաղափարն առհասարակ: Ու թեեւ բերված քառյակը զետեղված է սիրո ենթաբաժնում եւ իսկապես էլ առնչվում է սիրուն՝ միայն երկրորդ՝

*Գեթ մի վերջին գգվանք ու սեր,*
*ոսկեգիսակս է անցնում,-*

տողի շնորհիվ, բայց սա ավելի շատ «բանական արարածի» ապրելու իրավունքի մարդկային պահանջի արտահայտություն է, անցողիկ կյանքի եւ մահվան անխուսափելիության գիտակցության պարտադրած՝ պատկերով արտահայտված զգացմունքային խորհրդածություն կամ փիլիսոփայություն է, ինչպես Նարեկացու, Օմար Խայյամի, Սայաթ-Նովայի, Պետրոս Դուրյանի, Թումանյանի, Իսահակյանի եւ մյուսների ապրելու իրավունքի պահանջը, նրանց ցավալի մռունչն ու հառաչը: Այս քառյակն էլ բուռն կենսասիրության ու մարդասիրության բարձրագույն արտահայտություններից է՝ գեղարվեստական ու փիլիսոփայական ընդհանրացման ահռելի ուժով:

Հովհ. Շիրազն անխառն զգացմունքների եւ հզոր մտքի, գեղարվեստական անակնկալ գյուտերի, պատկերավոր մտածողությամբ պոռթկումային բանաստեղծ է. սրա ապացույցը նրա 1930-50-ական թթ. շքեղ քնարերգությունը եւ տարատեսակ հզոր պոեմներն են: Սակայն առաջացող տարիքի եւ կենսաճանաչողության ընթացքի հետ միասին քնարականությունն աստիճանաբար տեղի է տվել խոհական տարերքի առաջ եւ զորեղացրել տրամաբանելու, փիլիսոփայելու ջիղը: Այս իսկ պատճառով էլ հասուն տարիքում գրված սիրո թեմայով քառյակները, քիչ բացառությունները չհաշված, չենք կարող դասել նրա լավագույն գործերի շարքը, իսկ «Քառյակներ հավատապատումի», «Քառյակներ խոհապատումի», «Քառյակներ մասիսապատումի», «Քառյակներ հայրենապատումի», «Քառյակներ հայոց լեզվապատումի», անգամ «Քառյակներ լուսնապատումի» ենթաբաժիններում գերակշռող են Հովհ. Շիրազին բնորոշ՝ կենսալի, խորունկ, հղկված ու բարձրարվեստ քառյակները:

Սիրային քառյակներից լավագույնները, անշուշտ, համեմատաբար երիտասարդ տարիքում գրվածներն են, որոնք սիրո անմիջական զգացմունքների դրսեւորումներ են եւ առկա են նաեւ ավելի վաղ հրատարակություններում, ինչպես, օրինակ, ինքնատիպ հոգեբանական խորք ունեցող այս մեկը, որ մարդկային մի ամբողջ դրամա է պարունակում՝ անիրավվածների, մերժվածների, «հատակի մարդկանց» հանդեպ բարեգթության ու բարձրագույն մարդասիրության բանաստեղծական դրսեւորման իմաստով.

*Գինետան բաժակի նման*
*ձեռքեձեռք անցած մի աղջիկ,*
*Ինձ մթնով այցի է գալիս*
*ցնորքով հարբած մի աղջիկ...*
*Գիտեմ՝ ինչ բաժակ է եղել, բայց*
*այնպես մաքուր է թվում՝*
*Երբ ինձ տաք արցունք է բերում*
*աշխարհից խաբված մի աղջիկ:*
282

*Շարունակությունը՝ էջ 7*



# ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ...

*Սկիզբը՝ էջ 4*

Այդ մարդկանց միջեւ ծավալվող կարճատեւ խոսակցությունները բացահայտում են գյուղացիների հոգեբանությունը, նրանց հարաբերությունները: Գյուղում քահանան մեծ հեղինակություն վայելող անձ էր: Նրա ասածն օրենք էր: Ոչ ոք, բացի հարուստ ծերերից, որոնք սովորաբար «հաստատուն ձայն ու հպարտ շեշտ ունեին», չէր համարձակվում առարկել նրան: Հարուստները վիճում էին, «փորերնին տափկըցած աղքատիկ տէտէները միշտ հետեւակ են» *(Յակոբ Օշական, Խոնարհները,Պէյրութ, 1958, էջ 153)* եւ համաձայնում էին նրանց հետ, նույնիսկ չէին դժգոհում, երբ ընդհատում էին իրենց՝ առանց ընդունված խոսքի՝ «Խօսքդ մեղրով կոտրեմ» (Նույն տեղում, «Տոպիճը», «Շահպազ», «Թուրքմենին աղջիկը»):

Ծերերից անբաժան էին իրար շարունակ հրմշտող, տեղի համար միմյանց հետ վիճող մանուկները եւ Օշականի բնորոշումով՝ քոքուրները՝ «աշխարհքը նեղ գտնող այդ խեղճերը», գյուղի՝ աշխատանքից խուսափող կես խելոք, կես խենթերը, «...որոնք պակաս տախտակով կը ծնին ու կ'ապրին այդ պակասին ծանր հակազդեցութեանը տակ» *(Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, 1982, էջ 110)*: Նրանց «ցավերի ցավը» կինն էր, այն էակը, որի համար ընդունակ էր ընդվզելու քոքուրի խեղճ ու մենավոր հոգին: Քոքուրները ո՛չ ապուշ էին, ո՛չ խենթ: Նրանք այդպիսին էին դարձել «Արկած մը, որբութիւն մը, մանկութեան տարիներուն խոշոր խռովք մը» *(Նույն տեղում)* ապրելու պատճառով: Բայց գյուղացին բարի էր այն քոքուրների նկատմամբ, ովքեր ընդունակ էին որեւէ գործ անելու, եթե նա «անոնց մէջ տեսնէ տոկուն դնդերներ, շէն ու կարող բնավորութիւն» («Պաղտո», «Համարը»,*Յակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 66*):

Կյանքում միակ բանը, որը չի զանազանում հարուստին ու աղքատին, մահն է. «Տղաբերքը միշտ գերեզմանին հետ կը շփոթուի բոլոր մայրերուն մտքին» *(Յակոբ Օշական, Կայսերական յաղթերգութիւն, Պէյրութ, 1983 էջ 167)*: Այդ համընդհանուր ցավի մեջ երեւում են նաեւ «Նարեկի» զորությամբ փրկված թե՛ հարուստ, թե՛ աղքատ կանայք: Եթե հարուստները հնարավորություն ունեին ստանալու բժշկի օգնությունը, ապա Նարեկը աղքատ թաղի ու գյուղի բժիշկն էր՝ «ձրի, զօրաւոր» («Նարեկը», «Պառավին անէծքը»):

Գյուղացիների մեջ ամուր նստած էր հավատն Աստծո եւ Եկեղեցու նկատմամբ. «Առանց Աստըծո տերեւ կըշարժի՞»: Մի անխախտ եւ սուրբ սովորություն էր տոն օրերին Սուրբի գնալիս գյուղի հարեւանությամբ գտնվող սուրբ հարթավայրում հավաքվելը: Ժողովուրդն ամեն կիրակի ժամ էր գնում: Բայց ինչպես հիմա, այն ժամանակ եւս հայը եկեղեցի էր գնում՝ անցավորների հիշատակը սրտում, «գերեզմանին հեռաւոր մեռելներուն տուած միտքը» *(Նույն տեղում էջ 83)*:

Գյուղի եկեղեցին՝ իր բազում խորհրդավոր խորհուրդներով եւ հրաշագործ մասունքներով, համարվում էր գյուղի զարդը: Այն գյուղացիների աչքում շատ ավելի գեղեցիկ ու զորավոր էր, քան քաղաքի որեւէ եկեղեցի: Այդ եկեղեցու դռնից արու զավակի լույս աշխարհ գալն ազդարարող բազում ավետիսներ են լսվել, որի ժամանակ աղքատներին բաժանվել է հաց, ձեթ, ձավար, իսկ կնունքից հետո՝ կաթով հալվա («Լուսատուն», «Մատմազել Եվա»):

Գյուղը կուրորեն հետեւում էր ավանդությանը, որը բազում երիտասարդների դժբախտության ու կորստի պատճառ էր դառնում: Ավանդության համաձայն՝ գեղեցիկ աղջիկներն անպայման զոհ էին գնալու, որովհետեւ չափազանց գեղեցկությունն աստվածային բան էր, եւ հասարակ մահկանացուներին վիճակված չէր մրցել աստվածների հետ: Սրան հավատում էին բոլորը՝ ահել թե ջահել, եւ այնքան կուրորեն, որ նույնիսկ անկախ իրենց կամքից՝ գեղեցկուհի աղջիկների կյանքը ծանր ընթացք ու ողբերգական ավարտ էր ունենում: Նրանք զրկվում էին մանկական խաղերից, պարերից, տոներին մասնակցելուց: Ու եթե աղջիկն ամուսնանար, ապա «ժողովրդին հավատքովը» անպայման մեկ ուրիշի մահվան պատճառ կդառնար. «Եթե ատոնք ծնած ատեն իրենց մայրը գերեզման չեն ղրկած, գոնէ հարս ըլլալու համար ուրիշ մըն ալ պիտի մեռցնեն» *(Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 235)*: Սա այնքան արմատացած ու կարծրացած էր, որ նույնիսկ Օշականը, այդ ամենը համարելով սնահավատություն, այնուամենայնիվ հանգում է այն մտքին, թե «Գեղին իմաստությունը չէր կրնար սխալած ըլլալ» *(Նույն տեղում, էջ 246)*:

Հարկ է նշել, որ Օշականի հիշատակած բոլոր ավանդությունները տեսական գրականության մեջ համարվում են ավանդազրույցներ: Սարգիս Հարությունյանն ավանդական զրույցների շարքն է դասում բանավոր արձակի տեսակներից մեկը՝ սնահավատական զրույցները, որոնք նվիրված էին տարբեր ոգիների եւ դրանց մասին եղած պատկերացումներին: Դրանցից էին հրեշտակների, սրբերի, տարբեր չար ոգիների (չարունք, սատանա, դեւ) մասին պատմվող ավանդական զրույցները՝ բոլորն էլ հենված կրոնական ու ժողովրդական հին ու նոր հավատալիքների վրա *(տե՛ս Սարգիս Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, Եր., 2010, էջ 171)*: Մանուկ Աբեղյանը գրում է, որ սնահավատական զրույցները կապված էին հմայական աղոթքների հետ, եւ այդ զրույցները պատմողներն ու լսողները հավատում էին դրանց ճշմարտությանն ու իրապես կատարված լինելուն *(տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Ա, Եր., 1966, էջ 37)*:

Գյուղում տարածված էր Ավազանի անտառի համբավը, որից ծառ գողացողը կամ նրա տարածքում տավար պտտեցնողը «զարկվում» են ս. Սարգսի կողմից: «Զարկվողները» զրկվում էին խոսելու ունակությունից, իսկ նրանց ծնողները դիմում էին «բուժիչ միջոցների»: Երբ ոչինչ չէր օգնում, հիվանդ տղաներին բուժվելու նպատակով նվիրում էին եկեղեցուն: Դա պարտադիր էր, չէին հարցնում նվիրվողի կարծիքը: Նվիրյալը խստորեն պետք է հետեւեր եկեղեցու կարգուկանոնին: Հակառակ դեպքում կործանվելու էին ոչ միայն տղան եւ նրա ընտանիքը, այլեւ ողջ գյուղը: Իսկ որ սուրբը վրեժխնդիր էր լինելու, դրանում բոլորն էին համոզված: Կար վերադարձի միայն մեկ միջոց, որն էլ անհնարին էր. «Նվիրված տղան աղեկնալէ վերջ կրնար գնվիլ ժամեն իր ծանրությամբը ոսկիի փոխարեն» («Հորքուր Վարդան», «Կանանչ-կիրակի») *(Հակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 113)*:

Գյուղում կային շատ աղբյուրներ, եւ ամեն աղբյուր ուներ իր յուրատեսակ անվանումն ու խորհուրդը: Գյուղացիների հավատալիքների համաձայն՝ աղբյուրները պատկանում էին ոգիներին եւ կրում էին համապատասխան անուն: Եվ, հավանաբար, սա է պատճառը, որ Օշականի «հեքիաթներում» դրանք գրվում են բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությամբ՝ «Աւետումի Աղբիւր», «Վիճակին Աղբիւր», «Կաղանդին Աղբիւր» եւ այլն:

Օշականի՝ գյուղը պատկերող գործերը դառնում են մի յուրահատուկ հանդիսարան ոչ միայն մարդկանց, այլեւ ազգային մոռացված, դեռեւս նշվող կամ որեւէ տեղանքին միայն բնորոշ տոներին ծանոթանալու համար: Այս գործերում նկատվում է նաեւ հայրենի գյուղաշխարհի հոգեւոր մշակույթը փրկելու Օշականի մեծ ձգտումը: Օշականը, լինելով իր գյուղի տոնախմբությունների, ծիսակատարությունների անմիջական մասնակիցը, մեծ վարպետությամբ վերակենդանացրել է դրանք: Ընթերցողը հաղորդակցվում է այն ամենի հետ, ինչն ստեղծել էր հայ գյուղացու վախը, հավատը: Դրանցից են, օրինակ, գյուղի ժամկոչի՝ երկար տարիներով սնդուկներում պահված սուրբ մասունքները: Օշականը մանրամասնորեն բացատրում է այդ նվիրական մասունքների խորհուրդները, դրանց զորությունը: Դրանցով բուժում էին վերքերն ու վնասվածքները: Գոյություն ուներ կաթնատուների կաթն առատացնող եւ նրանց պաշտպանող ոսկոր, որը կապվում էր հովվի շալին: Սակայն այդ մասունքների մեջ ամենանվիրականը «աղջիկներուն ու երիտասարդ տղոց սիրական մասունքն» էր *(Յակոբ Օշական, Կայսերական յաղթերգութիւն, Պէյրութ, 1983, էջ 124)*՝ սուրբ զարդերով գեղեցկացրած: Այսպես անցել են դարեր, բայց ասես ոչինչ չի փոխվել այդ մասունքների նկատմամբ գյուղացու վերաբերմունքի մեջ: Իսկ դա վկայում է հայ մարդու անխախտ հավատի մասին, որովհետեւ լսածն ու տեսածը կրկնել առանց կարդալու՝ կարող է միայն մեծ հավատացյալը («Լուսատուն»):

Օշականի հերոսները նահապետական կյանքով ապրող գյուղացիներ են՝ իրենց աշխարհին բնորոշ հոգեբանությամբ: Նրանք կուրորեն հետեւում են ավանդույթներին եւ սովորույթներին: Այդ սովորություններն այնքան արմատացած էին, որ նույնիսկ երկար տարիներ ապրող մարդը, եթե ուզում էր խախտել այն, չէր համարձակվում՝ «հին օրերու զգուշութիւններէն մնացած սովորութեան մը հնազանդելով» *(Յակոբ Օշական, Խոնարհները, Պէյրութ, 1958, էջ 150)*:



*Շարունակությունը՝ էջ 8*

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝
## ըստ ռումինահայ տարբերակի



Սկիզբը՝ էջ 5

Այսպես կը հաջողինք մեր հույսը պահել»: Սրանով պիտի բացատրել Հայկական լեգեոնի գործունեությունը Երկրորդ համաշխարհայինի տարիներին՝ «սեփական երազների բեռան տակ» չխորտակվելու համար:

Այսպես ի մի են բերվում Ռումինիայի հայկական հետքերը՝ հիշեցնելով Շահնուրին, ով հայության բեկորների ճակատագիրը տեսավ Ֆրանսիայի հորձանուտում:

Գաղափարը հասունանում եւ հերթական ձեւակերպմամբ հնչում է հոգեկան ու տրամաբանական այս լիցք ու շեշտով. «Շշուկների մատյանը պատմում է հատկապես պարտվողների մասին»: Երջանիկ է, որ իրեն է «վիճակվել Շշուկների մատյանի պատմիչը լինել»:

Եվ մեծ հարցականը, որի պատասխանը հայ ժողովրդի համար պահանջում է յուրաքանչյուր ոք՝ գրելու պատմության հաջորդ էջը՝ «Հիմա ի՞նչ պիտի պատահի»:

Իսկ պատահում է այն, որ վրիժառու հերոսների անունները գաղտնապահվում են փայտե ձիուկների տեսքով, որոնցից մեկը՝ որպես խաղալիք, ինքը՝ հեղինակն է ձեռքն առնում: Այսինքն՝ իր այս գրքով գրողը թշնամու ճակատին արձակում է հերթական գնդակը՝ համալրելով վրիժառուների շարքը: Նա խոստովանեցրեց իր հերոսներին, որովհետեւ հերթական քայլն իրենն էր եւ... պապինը:

Ամբողջ վեպի ընթացքում հասունանում է պապի կերպարը, ով ինքը կարող էր այս կամ այսպիսի մի վեպի հեղինակ լինել: Բայց իր փոխարեն նա իր ու յուրայինների կյանքը պատմելու հնարավորություն էր տվել թոռանը: Եվ ահա այդ կերպարի վերջին բացահայտումները. «Մեծ հայրս երբեմն իր սենյակում փակվում, ջութակ էր նվագում, ապա ողբագին երգեր էր մրմնջում»: Հետո լուր է հասնում, որ Մոնտեբելոյում մահացավ Միսաք Թոռլաքյանը՝ զորավար Դրոյի զինակիցն ու վրիժառուն: Այս պահին թվական է նշում. «1968 թվականի նոյեմբերի 12-ի երեկոն էր: Ճշգրիտ թվականը, անշուշտ, կարեւոր չէ, ու թեեւ Շշուկների մատյանը պատմության դասագրքի նման թվականներով լիքն է, փաստորեն այդ թվականներից ոչ մեկի հետ կապված չէ»: Այդպես է, որովհետեւ մահվան թվականը մանրամասնություն է (ոչ ավելորդ), «իսկ մահից, ուրեմն նաեւ կյանքից ավելի կարեւոր՝ հիշողությունն է»:

Վեպն ավարտվում է պապի մահվամբ. «Լմնցավ... վերջապես լմնցավ: Հիվանդությո՞ւնը: Նոր հիվանդություն է, գրքերում գրանցված չէ: Այդ հիվանդության անունն է հայրենիքի ցավ»: Եվ բնական մի հարազատությամբ պապը հետզհետե մե՛կ Կոմիտասին էր նմանվում, մե՛կ՝ Անդրանիկ զորավարին. «Մինչեւ սեփական մահվանը հասնելը՝ անցնում էր իրենից առաջ եղած մեռյալների շարքի միջով»: Նահատակների սրբագործված պատկերաշարն է:

Կատարվում է նաեւ ոգու տեղափոխություն. «Մեծ հորս ձայնն իմ ներքին ձայնն էր դարձել»: Այս է սերունդների հաջորդականությունը, որ եկեղեցին ամեն յոթ տարին մեկ անում է մյուռոն եփելիս՝ ավելացնելով հնից մի բաժին: Եվ այսպես դեպի սկիզբ՝ մինչեւ առաջին մյուռոն:

Պապը մահացավ 1968 թ. նոյեմբերի 27-ի՝ լույս 28-ի գիշերը: Թաղումից առաջ Սահակ Շեյթանյան քենակալը հանգուցյալի խաչված ձեռքերի տակ դնում է «Նեմեսիս» գործողության պատմությունը: «Լմնցավ, վերջապես լմնցավ»,- պապի շշունջը կրկնում է Սահակ Շեյթանյանը:

Բայց ոչ, «Շշուկների մատյանը» չի վերջանում, որովհետեւ պապի մահից հինգ տարի անց Լոս Անջելեսում՝ Սանտա Բարբարայի «Բալթիմոր» հյուրանոցում, 80-ամյա հայ Գուրգեն Յանիկյանն սպանեց թուրք հյուպատոսին ու նրա քարտուղարին: Բայց դա էլ վերջը չէ: 2007-ի հունվարի 19-ին տրապիզոնցի մի թուրք սպանում է լրագրող Հրանտ Դինքին: Պատերազմը շարունակվում է:

Կան գեղարվեստական երկեր, որոնց մեջ միջավայր հասկացությունը բացակայում է: Գլխավոր հերոսն ու մյուս հերոսներն են, բայց խորքի տեսադաշտը դատարկ է: Այս վեպը խմբանկարային կենդանի միջավայրի մեջ է պահում հերոսների շարժը: Պատումի հարմար մի հատվածում նրանցից որեւէ մեկն առանձնանում եւ ներկայանում է խոշոր պատկերով: Այսպես խմբանկարը միշտ կա՝ առանձին անունների խոշորացումով:

Պլուտարքոսին արձագանքելով՝ տեսակետ է հայտնում, թե յուրաքանչյուր մարդու կյանք զուգահեռ կենսագրությունների մեջ է անցնում, որոնցից մեկը դրված է լինում մատյաններում: Այս դեպքում, մատյան ասելով, թեեւ մետրիկան՝ չափաբերականը նկատի ունի, բայց ահա այդպիսին է դառնում նաեւ նրա այս գիրքը՝ կենսագրություններ՝ որպես պատմության էջեր: Ուզում է հիշել իր միջավայրն ստեղծող բոլոր կարեւոր դեմքերին, խմբանկարը թերի՞ է, ուրեմն նոր համալրումով նորից պետք է նկարել: Ահա այդ լուսանկարի վտանգված պատկերը՝ «Վիրջինիայի պատմությունը», որ քիչ էր մնում էջերից դուրս թռչեր, վերադառնում է Շշուկների մատյանի մեջ:

Վեպի բանարվեստի հիմքում Գաբրիել Գարսիա Մարկեսի «Մենության հարյուր տարին» է, բայց ոչ մոգական իրապաշտությամբ, այլ՝ քաղաք, միջավայր, տոհմաբանություն ստեղծելու առումով: Այստեղ ոչ թե մոգական իրապաշտություն է, այլ պատմական փաստերի ու իրադարձությունների իրապաշտություն, այլ կերպ՝ պատմական իրապաշտություն:

Շարունակությունը՝ էջ 8

# ՇԻՐԱԶՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Սկիզբը՝ էջ 6

Քուչակյան ու սայաթնովյան սիրո երգի ավանդույթը նույնպես իր շիրազյան հոյակապ արտահայտությունն ունի նրա հաջողված քառյակներում: Իր «բեմուրվաթին» ձգտող ու չհասնող Սայաթ-Նովան՝ Պ. Սեւակի դիպուկ բնորոշմամբ՝ այդ «ողբերգականորեն անհույս սիրո երգիչը», գրել է.

*Յիս մէ ղարիբ բըլբուլի պէս,*
*դուն օսկէ ղափազի նըման,*
*Էրեսըս դի՛ր վուտիդ տակըն՝*
*անց կաց փիանդազի նըման...*

Սայաթ-Նովա, Հայերեն խաղեր, Վ. Զարգարյանի աշխատասիրությամբ, «Հայագիտակ» հրատ., Եր., 2013, էջ 64

Սրանից ներշնչված, իր սիրո ճակատագրով նրան նմանվող, գրեթե նույն իրավիճակում հայտնված Հովհ. Շիրազի՝ հեղինակի հետ նույնացած քնարական հերոսն էլ իր սիրածին հասնելու երազանքը գրեթե նույն կերպ է արտահայտում՝ ինքնատիպ պատկերով, որի մեջ, սակայն, տեսանելիորեն առկա է գրական ազգակցության դրսեւորումը՝ իր մեծ նախորդի՝ Սայաթ-Նովայի կրակված սիրո շունչը:

(Սայաթ-Նովայի լավագույն սիրերգերը գրվել են 1742-1759 թթ. ընթացքում, երբ ինքը 20-37 տարեկան էր: Ահա ինչու համոզիչ չի կարող լինել նրա 1712, առավել եւս՝ 1707 թ. ծնված լինելը, որ համառորեն պնդում են որոշ «սայաթնովագետներ»: Մանավանդ 1752-1759 թթ. հայերեն խաղերը գրելիս նա եղել է 30-37 տարեկան, երբ ստեղծել է իր՝ հասուն տղամարդու ճակատագրական տառապալից սերը պատկերող «Էշխըն վառ կրակ է», «Մէ խօսք ունիմ», «Թամամ աշխարի պըտուտ էկա», «Աշխարհումըս ախ չիմ քաշի», «Չիս ասում թէ լաց իս էլի» եւ այլ գլուխգործոցներ, որոնք սիրո զգացմունքային հրդեհի անմիջական արտահայտություններ են եւ ոչ թե վերհուշի, ինչպես Ավ. Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա» թեկուզ սքանչելի բանաստեղծությունն է):

*Դուն՝ կըրակ, հագածըդ՝ կըրակ,*
*վո՞ւր մէ կըրակին դիմանամ,-*

հառաչում էր Սայաթ-Նովան՝ գեղեցկուհի-գոզալին նկատի ունենալով, եւ նրան ավելի քան երկու դար հետո, իր «վառ կրակ սիրտը» վկայակոչելով, ձայնակցում էր գեղեցկության սիրահար Հ. Շիրազը, որը դեռեւս չէր համակերպվում ճգնավորի, մենավորի ու ալեւորի պես ապրելու տխուր գաղափարին: Որքան էլ առաջացող տարիքն ու բանականությունը ջանում են հեռացնել վայելքից ու ճգնավորության համակերպել, նրան դեռեւս հրապուրում ու ձգում է «վառ սրտով» ու սիրով ապրելու կենսակերպը.

*Ասի՝ թողնեմ կին ու գինի,*
*ճգնավորի պես ապրեմ,*
*Քաշվեմ սարը, սար ու ձորի,*
*մենավորի պես ապրեմ,*
*Բայց սարում էլ սարի մարալն*
*հուր թվաց իմ աչքին,-*
***Քանի վառ ես, սիրտ իմ, ես ո՞նց***
***ալեւորի պես ապրեմ...***

287

Երկու բանաստեղծների ինքնախոստովանություններն էլ մարդկային են ու բնական. երկուսում էլ ընդգծվում է **սիրո հասակի** խնդիրը, թեեւ մի դեպքում սիրած կինն է հուր կրակը, մյուս դեպքում՝ բանաստեղծի սիրտը: Ընդհանրությունները միայն արտաքուստ են բռնազբոսիկ կամ անհամոզիչ. իրականում նրանք արտահայտությունն են մի օրինաչափության, որ առկա է գրեթե բոլոր բանաստեղծների պարագայում:

Սայաթ-Նովայի սիրո խաղերը եւ Շիրազի համաբնույթ բանաստեղծությունները զուգադրելու եւ այսպես մտածելու հիմք տալիս են. թե՛ նվիրվածության ու զոհաբերվելու պատրաստակամության բացահայտ ակնարկը եւ թե՛ բառապատկերային մտածողության հազիվ նկատելի նուրբ ընդհանրությունները, որ առկա են երկու բանաստեղծների գործերում էլ: Արդ, եթե շիրազյան քառյակը համեմատենք սայաթնովյան՝ վերեւի պատկերի հետ,



կպարզվի մի հետաքրքիր գաղտնիք. **օսկէ ղափազ -** վանդակը եւ ոտքի տակ կանաչ ճամփա **- փիանդազ-**ը հուշում են առաջին հայացքից գրեթե անորսալի մի ընդհանրություն, որ դարձյալ երկու հայ բանաստեղծների գրական ազգակցության արտահայտություն է.

*Թե լինեի **վանդակի** մեջ՝*
*քո ձեռքի տակ թող լինեի,*
*Թե լինեի անմեռ մի սիրտ՝*
*քո կրծքի տակ թող լինեի,*
*Մի համբույրի հետ փոխեի*
*անմահությունն իմ երազուն,*
*Թե լինեի **կանաչ ճամփա՝***
***քո ոտքի տակ** թող լինեի:*

283, ընդգծ.՝ Ս. Մ.

Զուտ անձնական կամ «մաքուր քնարերգությունը» իր տարիքն ունի, եւ համապատասխան իրավիճակն ու կենսապայմաններն են կարգավորում զգացմունքի բանաստեղծականացման գործընթացը: Տարիքային այն ժամանակն է դա, երբ վառ է սիրահարների սրտի կրակը *(«Դուն՝ կըրակ, հագածըդ կըրակ, վուր մէ կըրակին դիմանամ»)*: Հասունացած եւ արդեն դեպի ծերություն թեքվող բանաստեղծի զգացմունքների բովանդակությունը կյանքն ու կենսափորձը փոխում են այնքան, որ զգացմունքների թեժությունը նվազում է, կամ «սրտի հուր բոցը» հանգչում, չի ունենում նախկին՝ այրող ջերմությունը, որ մղում է ինքնամոռացության ու անձնվիրության: Այդ իրավիճակը հենց Շիրազն ինքն է պատկերել քառյակներից մեկում.

*Սեւ խալերով մի՛ պարծենա,*
***ջուխտն էլ մի բոց են հանգած,***
***Երեկ էին սիրտս վառում, այսօր***
***հնոց են հանգած,***
***Իմ սրտի հուր բոցով էին արեւ***
***թվում իմ աչքին,***
***Հիմա, երբ իմ հուրն է հանգել,***
*նրանք ամրոց են ընկած:*

281, ընդգծ.՝ Ս. Մ.

«Յոթնապատում» գրքում բարեբախտաբար նշված է այս քառյակի գրության տարեթիվը՝ 1944: Այսինքն՝ հեղինակն այն գրել է մոտ 30 տարեկանում: Նույնիսկ այս դեպքում չենք կարող պահանջել հեղինակից, որ նա հարազատորեն ու անկեղծորեն վերարտադրի սիրո այն բուռն զգացմունքները, որ ունեցել է ավելի վաղ՝ պատանի տարիքում:

Բնական է, որ հասուն տարիքում գրված բանաստեղծությունները չեն ունենա պատանության կամ երիտասարդության տարիքի զգացմունքային նույն ուժն ու անմիջական անկեղծությունը: «Կգաս... բայց ուշ կլինի», «Դու հեռացար, սիրտս տարար», «Ջահելություն, ի՞նչ տամ, որ գաս», «Կարմիր վարդը ձեռքիդ աղջիկ» եւ այլ քառյակները սրա հիմնավորումն են: Սակայն ենթաբաժնի մյուս քառյակներում երիտասարդական սիրո բուռն ու ազնիվ տենչերին, մաքուր ու բյուրեղյա զգացմունքներին գերակշռում են սիրո վերհուշը կամ հոգեբանական նոր իրավիճակի թելադրած բարոյախոսությունը, որոնք բերում են զգացմունքների այլ բնույթ եւ մղում կնոջ ու մոր մասին փիլիսոփայական այնպիսի խորհրդածությունների, որ առկա են նաեւ հասուն տարիքում գրված խոհաքնարական ուրիշ բանաստեղծություններում: Բոլորն այդպես չեն, իհարկե, սակայն առանձնացված հետեւյալ երկու քառյակներն այլ կերպ հնարավոր չէ բնորոշել.

*Կինն է իշխում, ոչ թե մայրը,-*
*այս է ցավը իմ երգի,*
*Կնոջ ծովից մայր կղզին է*
*տենչում նավը իմ երգի,*
*Ա՛խ, երբ կինն էլ կղզիանա՝*
*կսրբանան մանկունքն էլ՝*
*Կանմահանա եւ մայր լեզուն՝*
*միակ լավը իմ երգի:*

286

*Ավա՜ղ, վերջին սուրբ սիրերգակ*
*բանաստեղծն է իմ ոգին,*
*Սիրտս՝ սիրո վախճաներգակ՝*
*բայց անեղծ է իմ ոգին,*
***Քեզ** է մնում՝ կարապներս*
*մինչեւ պորտը մերկանան,-*
*Ո՞ւր ես, իմ սուրբ*
*աստվածամայր, քեզնով մեծ է*
*իմ ոգին:*

283

(Մեզ թվում է՝ ընդգծված բառը վրիպմամբ է տպվել ***քեզ է մնում.*** պետք է լիներ ***քիչ է մնում.*** Այսինքն՝ ***Քիչ է մնում կարապներս մինչեւ պորտը մերկանան***: Ինքնագրի հետ բաղդատելով միայն կարելի է այս եւ մյուս թյուրմացությունները ճշտել):

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# Մարդու իրավունքները եւ արժանապատվությունը՝ բիոէթիկական հիմնահարց



Սկիզբը՝ էջ 5

Գիտական բժշկության մեջ բիոէթիկայի հումանիստական գաղափարների ներդրման նպատակն է գիտնականների հոգում արթնացնել «մասնագետի խիղճը», խիղճ, որ ետ կպահի իրենց գենային ինժեներիայի մեթոդներով կենդանիների եւ բույսերի նոր տեսակների եւ առավել եւս, առաջին հերթին, կլոնավորման մեթոդներով մարդ ստեղծելու անհեռատես փորձերից:

Եթե հասարակական գիտակցության մեջ ամրապնդվեն բիոէթիկայի հումանիստական գաղափարները, ապա դա թույլ կտա լուծել բարդ հարցերի մի հսկայական կծիկ, որ առաջանում է «մեղքով»: Գիտնականներ, որոնք երբեմն բարոյական տեսակետից խիստ կասկածելի գործողություններով մարդկային քաղաքակրթությունը կանգնեցնում են անդունդի եզրին, ավելին՝ հանգեցնում են մարդկության հնարավոր ոչնչացմանն ու վերացմանը: Ահա թե ինչու է այդքան կարեւոր ու անհրաժեշտ ձեւավորել բժիշկ գիտնականների բարոյափիլիսոփայական ինքնագիտակցությունը (Биоэтика: Вопросы и ответы, под ред. Б. Г. Юдина и П. Д. Тищенко, Москва, 2003):

Մարդու իրավունքներն ընկալվում են որպես անբաժան, հիմնարար իրավունքներ, որոնք ի ծնե ունի յուրաքանչյուր մարդ՝ այն պարզ պատճառով, որ նա մարդ է: Այս իրավունքները (խոսքի ազատության իրավունքը, կյանքի իրավունքը, կտտանքների չենթարկվելու իրավունքը, ինքնորոշման իրավունքը եւ այլն) գործում են անկախ մարդու տարիքից, սեռից, ծագումից, ազգությունից, համոզմունքից եւ այլն:

Սովորաբար մարդու իրավունքները լինում են 3 տիպի.

ա. Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքներ՝ կրոնի, համոզմունքի իրավունքը, խոսքի ազատության իրավունքը եւ այլն:

բ. Մշակութային, սոցիալական, տնտեսական իրավունքներ՝ աշխատանքի, կրթության, սննդի, ապաստանի եւ այլն:

Վերոնշյալ բոլոր իրավունքներն ամրագրվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մեջ 1948 թ.:

գ) Հավաքական իրավունքներ, որոնք սկսել են ամրագրվել 1970-ականների ապագաղութացման շրջանում, երբ Աֆրիկայի ու Ասիայի շատ գաղութներ պահանջեցին իրենց բնական ռեսուրսներն ինքնիշխան տնօրինելու, ինքնորոշման իրավունքներ:

1941 թ. Ֆրանկլին Ռուզվելտն իր «Երկրի իրավիճակի մասին» ելույթում կոչ արեց պահպանել չորս անհրաժեշտ ազատությունները, որոնք են՝ ազատություն վախից, ազատություն կարիքներից, խոսքի ազատություն եւ խղճի ազատություն: Սա նոր խթան հանդիսացավ մարդու իրավունքների՝ որպես խաղաղության եւ պատերազմի ավարտի պայմանի զարգացման համար:

Երբ հասարակությանը հայտնի դարձան նացիստական Գերմանիայում իրականացվող վայրագությունները, պարզ դարձավ, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը բավարար չի սահմանում մարդու իրավունքները: Անհրաժեշտ եղավ ստեղծել համընդհանուր հռչակագիր, որը կթվարկեր եւ կներկայացներ մարդու բոլոր իրավունքները. «Կառավարություններն իրենց եւ իրենց ժողովուրդների վրա մեծ պատասխանատվություն են դնում, ինչն ապահովում է հռչակագրում նշված՝ մարդու իրավունքների համընդհանուր եւ արդյունավետ ճանաչումն ու պահպանումը»:

Սակայն իսլամական երկրները (Սուդան, Պակիստան, Իրան, Սաուդիան Արաբիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Քաթար) քննադատել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ստեղծել իրենցը՝ Կաիրեի հռչակագիրը՝ նշելով, որ իրենց կառավարությունները հիմնված են Շարիաթի վրա. «Հրեա-քրիստոնեական ավանդույթների աշխարհիկ փոխըմբռնումն է դա», ինչը չի կարող իրականացվել մահմեդականների կողմից՝ առանց խախտելու իսլամական օրենքը:

*Շարունակելի*

***Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ***
***Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ***

# ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ ԲԱՐՔԵՐԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

Սկիզբը՝ էջ 6

Գյուղացիներն ունեին իրենց սիրած տոները: Բոլոր տոների համեմատությամբ մեծ խորհուրդ ուներ Զատիկը: Այդ ժամանակ կախարդիչ էին դառնում բնության եւ մանավանդ աղջիկների ու հարսների գեղեցկությունը, կալերի վրա «անոնց խատուտիկ, չիոգնող» պարը: Իսկ Վարդավառի տոնին մտմտուքների մեջ խեղդված հայ գյուղն աշխուժանում էր, կյանքը նոր շունչ էր ստանում («Զատիկ», «Վարդավառ»):

Օշականը մեկնաբանում է նաեւ Համբարձման տոնի խորհուրդը: Երեկոյան սկսվում էր ողջ պատրաստությունը: Աղջիկները մեծ ոգեւորությամբ իրար էին անցնում: Յուրաքանչյուր մասնակից պետք է մասնակցեր կաթի համար նախատեսվող դրամահավաքությանը: Առավոտյան աղջիկները մածնով էին պատում իրենց մարմինը, հետո ծաղկի ջրով լոգանք ընդունում, հավկիթ ուտում, որից հետո վիճակ էին գցում («Գոլոն»):

Աղջիկների ու հարսների սիրած տոներից էր «Կանանչ-կիրակին»: Ապրիլ ամսվա կիրակնամուտին (ստույգ օրը չի նշվում), երբ նշանված աղջիկներն ու նորահարսները պառկում էին քնելու, նրանց գլխավերեւում կախված էր լինում կանաչ շալվար՝ ալ կարմիր քողով ծածկված: Սա խոսում էր այն մասին, որ երբ «Կանանչ-կիրակին լուսնայ», նրանք, մոմը ձեռքերին ու երգը շուրթերին, պետք է Ավազանի անտառը գնան՝ պտղաբերության ու առատության խորհրդանիշ «Աւետում-Աղբիւր»-ի մոտ Հայ-կանանչը պարելու եւ իրենց հագուստից մի մաս ուխտավայրի շյուղերին ամրացնելու: Երգն ու պարն ավարտվում էր հավաքված ծաղիկների թերթիկներն ավազանը նետելով: Խումբը երգ ու պարով բռնում էր գյուղի ճամփան («Կանանչ-կիրակի»): Կաղանդի տոնին մանուկների եւ պատանիների համար ընդունված կարգ էր ազգականների տուն «ձեռք-պագի երթալը», իսկ մեծահասակների համար՝ «մեռել-տուն» երթալը: Նույն երեկոյան գյուղում մանկանց խմբեր են պտտվում, որոնք, դռների ետեւում պահված, ներս էին նետում մի գոտի: Տանտերը գոտին բարիքով էր լցնում, խումբն էլ օրհնելով ու երգելով հեռանում էր («Տոգսանը»):

Որպես ամփոփում՝ կարող ենք ասել, որ Օշականը լավ էր ճանաչում իր ժողովրդին, նրա ծեսերը, ավանդույթներն ու սովորույթները: Նույնիսկ բնության գեղեցկությունները նկարագրելիս Օշականը գյուղական պատկերները լրացնում է մարդկանց բարքերի ու կենցաղի նկարագրությամբ: Գյուղի կյանքի ու կենցաղի նկարագրություններում կոլորիտը պահպանելու եւ խոսքը համեմելու նպատակով Օշականը օգտագործում է իրենց գյուղի խոսակցական ոճերը, ժողովրդական առած-ասացվածքներ, ինչպես, օրինակ, «Չէ՛, սա ուտելիք ապուր չէ», «Բայց ճնճղուկն ալ կ՚ապրի ոտքը բարակ», «Շատ ուզողին քիչ անգամ պիտի տրուի», «Տարի ըսածդ ի՞նչ է որ, աչքդ խփես, կանցնի» եւ այլն:

Մի խոսքով՝ Հակոբ Օշականի վաղ մանկության, պատանեկության եւ երիտասարդության տարիների ժողովրդագիտությունը դրսեւորվեց նրա արձակում, որտեղ պատկերները քարացած չեն. դրանք ե՛ւ նկարագրություններ են, ե՛ւ հոգեվիճակի արտահայտություն, ե՛ւ սյուժեի ընթացք:

***Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ***

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ըստ ռումինահայ տարբերակի

Սկիզբը՝ էջ 7

Մարկեսյան շունչն առկա է նաեւ Հարություն Խնդիրյանի կերպարում. «Շշուկներ էին պտտվում նաեւ, որ թափառում է աշխարհով մեկ՝ գնալով դեպի արեւելք, դեպի այն երկիրը, որ նրան լքել էր»: Ասես «Մենության...» Մելքիադեսի կերպարը լինի: «Շշուկների մատյանի» շուրջ իրադարձությունների պարբերական կրկնաբերումն իր հերթին հիշեցնում է «Մենության հարյուր տարի» վեպի առանցքային կրկնաբերումը՝ «Կանցնեն տարիներ, եւ ...»:

Վիպական պատումը շատ գեղարվեստական է, շաղախը՝ պատկերավոր:

Բնորոշումները դիպուկ են՝ «Մահվան քաղցրավուն հոտ», «Աստծո հետքը հայի դեմքի վրա քթարմատում՝ հոնքերի միացման տեղն է», «Լույսը ժայթքեց՝ հայելի կոտրող քարի նման», «Մեսիան շարունակեց՝ ջարդվող ճյուղի նման չոր ձայնով», գաղթի ճանապարհին «հողմածուփ լինելով՝ մեռյալները չարանում էին»:

Հեղինակը «հարգում է մանրամասները», ինչն արտահայտվում է հերոսների անունների, բնակավայրերի, գործող անձանց արարքների ուշադիր նկարագրությամբ, առանձին պատկերների տրամաբանական ձեւավորմամբ: «Ոմանք քարե խաչերին հենված մնալով, իսկ ոմանք էլ՝ հողի մեջ քաշվելով՝ մայիսյան անձրեւաջրերի պես», «մարդկանց նման պատասխաններն էլ են մեռնում՝ տեղ թողնելով, որ կյանքն առաջ գնա», «վիրավորված ձին մեռած ձի է»:



Ահա քաջածանոթ Սահակ Շեյթանյանը, ում թուրքերը զրկեցին սերնդագործելու հնարավորությունից. Սահակ Շեյթանյանը «խաղալիքների սովոր չէր եւ երեխաներ չուներ, որպեսզի նրանց հետ իր չապրած մանկությամբ վարվի»: Ինչ խաղալիք որ ուզել է, բայց ծնողները չեն գնել, ինքը հիմա կգներ իր երեխաների ու թոռների համար:

Շատ էջերում, օրինակ, վերջին գլխի սկզբում ակնհայտ է բանաստեղծի գրիչը: 1994-ին հեղինակն այցելել է Վազգեն Վեհափառին: Եվ ահա կերպարի ուրվագիծը. «Բայց կաթողիկոսն արդեն հիվանդ էր. ձեռքը կզակին դրած՝ հաշտված մի ժպիտ ուներ»:

Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյանը» նոր ժամանակների վեպ է, եւ Ռումինիայի ու Հայաստանի անկախության դարաշրջանի ծնունդ: Նոր ժամանակներ, նոր մտածողություն եւ պատմության ու հերոսների նոր կենսագրության միանգամայն նոր ընթերցում:

Գեղարվեստական շարժանկարներից մեկում իռլանդացի կինոաստղով տարված, բայցեւ նրա պահվածքից շատ արագ հիասթափված անգլիացի կինը նետում է. «Եթե ձեր երկիրը ձեզ վերադարձնենք, չեք կարող իմանալ, թե նրա հետ ինչպես պիտի վարվեք»: Չկայացած ինտիմ պահից կնոջ վայրկենական վիրավորանքը վերածվում է Իռլանդիայի անկախությանն ուղղված ազգային անարգանքի:

Այս դրվագը պատահական չհիշեցի: Հայ ժողովուրդը չի համակերպվել իր պատմական հայրենիքի կորստի հետ, ինչի մասին բարձրաձայնում են այս ու այս կարգի վեպերը: Մեր հայրենիքը մեզ չեն տա, մեր հայրենիքը մենք պետք է ազատագրենք պատմական հարմար մի թելադրանքի ժամանակ, եւ հենց այս պահից պարտավոր ենք իմանալ, թե ինչ պետք է անենք, ինչպես պիտի կառավարենք մեր երկիրը: Հավատացած եղեք՝ գալո՛ւ է այդ պահը:

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

**web կայք՝**
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 31.10.2016 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**